

## **Երբ Մահացան ...**

Ահա եւ հասնում ենք եւս մի Ապրիլ 24-ի, այն օրը երբ աշխարհով մեկ հայեր հիշում են այն տարին, երբ իրենց նախնիներից հազարավորներ ոչնչացվեցին այն դեպքերի ընթացքում, որոնք լայնորեն հանաչված են որպես 1915-ի Հայոց Ցեղասպանությունը: Ես պատմաբան չեմ, ոչ էլ միջազգային իրավունքի մասնագետ, բայցեւայնպէս պարտավորված եմ զգում հաղորդելու իմ անձնական հանապարհից որոշ գաղափար եւ թե ինչպէս է այն վերաբերվում հայ-թուրքական հարաբերություններին:

Ես հիսուներկու տարեկանանոց թուրք-ամերիկացի կիւն եմ: Երեսուն տարուց ավել ապրել եմ Բոստոնի շրջանում՝ նախ որպէս համալսարանի ուսանող, հետո էլ որպէս հեռուստատեսային աշխատակից, եւ վերջերս էլ որպէս միջազգային հարաբերությունների ավագ ուսանող:

Պետք է խոստովանեմ որ մինչեւ քառասունական տարիներին երկրորդ կեսը երբեւէ իսկական խոսակցություն չէի ունեցել որեւէ հայի հետ իր անձնական կամ ազգային պատմության շուրջ, ուր մնաց Հայոց Ցեղասպանության մասին: Ինչո՞ւ:

Պատասխանը նշում է թե ինչու եմ հիմա պարտավորված զգում իմ անձնական հանապարհի մասին գրելու եւ թե ինչպէս եմ վերաբերվում երկու՝ իրարից քառուրդ դարով բաժանված սպանությունների հետ:

1982 թ. մայիսի 4-ին, ինձ լուրը հասավ որ մեկը, ում հետ անձնապէս ծանոթ էի, գեներով սպանվել էր աշխատանքից տուն գնալու համբուն: Այդ բարի ու մեղմ մարդը Օրհան Գյունդուզն էր՝ Թուրքիայի այն ժամանակվա պատվո հյուպատոսը Բոստոնում: Մենեչուսեց նահանգի Փենբրիջ ֆազաի իր փոքր հուշանվերների խանութում մի պահ մտել էի՝ արագ բարեւ ասելու, փաստորեն իր մահվանից ընդամենը մի քանի ժամ առաջ: Հիշում եմ թե ինչպէս իր տիկնոջ փորձում էի մխիթարել մի քանի հեռախոսազանգով, սփոփանքի մի քանի բառ ասել իր հուղարկավորության

Ժամանակ: Բայց ամենից շատ հիշում են թե ինչպես Գյունդյուզի սպանությունը («Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներ» կոչեցյալ մի խումբ պատասխանատուները կրեց) ինձ այնքան շվարեցրեց որ հաջորդ ֆանհինգ տարին առ հասարակ խոսափեցի այդ նյութից:

Ուրսունականների առաջին կեսին այս շրջանի ազդեցիկ թուրքերը հաճախ ինձ ֆարոզական նյութեր էին ուղարկում, որպեսզի հանձնեի դրանք իմ աշխատած տեղին՝ «WCVB» հեռուստակայանին: Նպատակն այն էր, որ թուրքական պաշտոնական պատմությունից դուրս (այն որ 1915-ի դեպքերին դիտարկում էր որպես «ցեղասպանության պնդումներ») որեւէ բան արեւմտյան տեղեկատվամիջոցների հասու չլինի: Այս նաեւ այն ժամանակն էր երբ այն հաղորդումը որի համար աշխատում էի՝ «Chronicle» («Ժամանակագրություն») լրատվական հաղորդումը, Բոստոնի հարուստ բազմազանության մասին նյութեր էր պատրաստում: Բայց Բոստոնի համեմատաբար փոքր թուրքական համայնքի մասին նյութ չէր, եւ երբ ժամանակն էր «Chronicle»-ի հայերի մասին դրվագը ցույց տալու, եւ պարզապես գործի չգնացի՝ կյանքիս մեջ առաջին ու վերջին անգամ լինելով: Ես պարզապես պատրաստ չէի այդ «ց»-ից սկսվող բառի կրկնությունը լսելու հեռուստատեսությամբ, եւ գիտեի թե անպայման օգտագործվելու էր... այդ չարապաստիկ, վախեցնալիք, մշտապես-խոսափվելիք բառը՝ *ցեղասպանություն*: Այդ մտայնությունը շատ պարզ է եթե Թուրքիայում ծնված-մեծացած լինես: Ինչպես իմ սերնդի գրեթե բոլոր թուրքերը, հայերի մասին իմ գիտելիքները սահմանափակված էին դրանով, ինչ մեզ մատակարարել էին պատմության դասերի ժամանակ. հայերը թշնամիների կողմին էին Օսմանյան կայսրության վերջին օրերին, եւ դրա համար մինչեւ վերջ դրանք դրոշմավել էին որպես Թուրքիայի եւ թուրքերի դավաճաններ:

Գյունդյուզի սպանությունից երկու տասնամյակները անցան, եւ այդ ընթացքում ես պարզապես հեռու մնացի Հայոց Ցեղասպանության նյութից, որովհետեւ շատ անհանգստություն էր պատճառում, շատ ցավալի էր, ու շատ դժվար արձարձելու: Անգամ որպես ավագ՝ աշխատանքի փորձից գալով ուսանող Իրավունքի եւ դիվանագիտության Ֆլէշլիքի անվան դպրոցում, վերջնական

թեզս Թուրքիայի ֆրդերի իրավունքների մասին գրեցի. հայերի նյութը շրջանցեցի: Մեծ ոգևորվածությամբ ձեռնամուխ էի լինում Թուրքիայի ֆրդերի իրավունքների խնդրում, բայց հայերի մասին որեւէ բանից հետո մնացի: Ուրեմն, քսան տարվա ընթացքում երկու երեխա մեծացրի՝ իրենց մեջ սերմանելով հավասարության իրավունքի եւ հասարակական արդարության իմ իսկ արժեքները, բայց մեկ բացառությամբ. երբեք չխոսեցի հայերի մասին կամ թե ինչու էլ չէի գնում Ութըրքսուն (Միացյալ Նահանգների երկրորդ ամենահայաբնակ շրջանը) Օրեան Գյունդուզի մահվանից հետո՝ մեկին, ում երեխաներս չէին էլ հանդիպել:

Եւ հասավ 2006-ի ամառը, երբ հրավիրվեցի աշխատելու հայ-թուրք երկխոսության մի ծրագրում, որ մասամբ կապ ուներ Հարվարդի համալսարանի հետ: Երբ շրջապատվում էի նոր գիտելիքներով (օրինակ, Օսմանյան կայսրության հայերի պատմությունը՝ մի նյութ, որ բացակա էր իմ դպրոցական պատմության դասագրքերից) եւ նոր ընկերներով (օրինակ, հայ-ամերիկացիներ, որոնց հետ գուգահեռ կյանք էի ապրում՝ մինչ այդ առանց մի բառ անգամ փոխանակելով), մի սպանության լուր հասավ: Հրանդ Տինք՝ Թուրքիայում հայ խմբագիր, Պոլսում իր գրասենյակի դիմաց գեներով սպանվել էր տասնվեց տարեկանանոց ազգայնամուլ մի թուրքի կողմից: Ես շատ բան չգիտեի Տինքի մասին այդ ժամանակ: Միայն գիտեի որ «Ակոս»-ի հիմնադիրն էր՝ Թուրքիայի առաջին համայնֆային թերթը որ ե՛ւ հայերենով, ե՛ւ թուրքերենով էր սպագրվում... որ նա ավանդաբար լուռ ու գուսպ հայ համայնֆին աչքերն էր բացել՝ քաջալերելով ե՛ւ հայերի, ե՛ւ թուրքերի որ բացեիքաց խոսեն իրենց ինքնության եւ ընտանեկան պատմությունների մասին... որ անթիվ անձինք Թուրքիայում հայտնել էին իրենց կորած հայկական ակունքները իր օգնությամբ եւ աջակցությամբ:

Բայց ես այդ ամենը չգիտեի այդ հակատագրական օրը երբ առավոտյան լուրերը միացրի: Երբ լսեցի որ Տինքը սպանվել է, միայն մի բան գիտեի ամբողջովին վստահությամբ. ահավոր ու ատելիք մի դեպք էր պատահել, եւ դա անընդունելի էր: 2007-ի հունվարի 19-ն էր՝ Հայոց Ցեղասպանության նյութը իմ դեմ գցելուց քսան հինգ տարի անց:

Ուրեմն հաջորդող հինգ տարին անցա երկար ու ուրող ճանապարհով՝ սովորելով, կարդալով, եւ մտածելով, լսելով զանազան մարդկանցից՝ տեղում եւ արտասահմանից՝ անձնապէս, տեղեկատվամիջոցներով, եւ համացանցով: Դասընթացների մասնակցեցի, միջոցառումներում ներկա գտնվեցի, եւ անթիվ ֆիլմեր եւ այլ նյութեր դիտեցի Հայոց Ցեղասպանության եւ դրա հետեւանքների վերաբերյալ: Բայց ամենակարեւորը՝ բյուրավոր հայերի հետ խոսեցի, զանազան տեղերից ու կապերով՝ չափից դուրս աշխույժ երիտասարդներ, աշխատասեր միջին տարիքի անձինք, եւ մի քանի մեծահասակ գանձեր, ինչպէս Արեգա Տէր Ղազարեանը, Ուաքըրթաունից, ով շուտով հարյուր տարեկան կդառնա: Սուրբի ու թեյի շատ սեղանների շուրջ ընկերացա Հէրի Բարսեղեանի հետ, ում նախնիները Կեսարիայից են եւ ով հաճախ Թուրքիա է գնացել վերջին տարիներին՝ փորձեր կատարելով հայերի ու թուրքերի ավելի ու ավելի մեկտեղ հասցնելու Ատլանտյան օվկիանոսի երկու կողմերում: Թատերագիր Ջոյս Վեն Դայֆին հետ ծանոթացա. նա ներշնչվեց շատ գեղեցիկ մի ներկայացում գրելու իր մեծմոր պատմության հիման վրա՝ Էլմասի, ով ցեղասպանության վերապրող էր Մեզիրե գյուղից (այժմյան Էլազըղի շրջանում): Եւ դիտեցի ու գնահատեցի Ռոջըր Յակոբեանի դիտանյութերը՝ Լեֆսինգըն, Մեսէչուսեցից գորգի մասնագետ, ով երբեք չի կորցնում առիթը ինձ պատմելու Մարաշի (իր նախնիների բաղաձայն) թուրք բաղաձայնի մասին, ով 1915-ի սարսափանքին շատ հայերի կյանքը փրկեց: Ե՛ւ նյութական, ե՛ւ հոգեկան կորստի անթիվ պատմություններ լսեցի իմ նոր ձեռք բերած հայ ընկերներից, եւ ակնատես դարձա այդ հայերի բարեկամական շարժումներին, երբ նրանք իրենց նախնական վախը հաղթահարեցին ու որոշեցին այցելել իրենց նախնիների հողերը այսօրվա Թուրքիայում: Երթալով ծանոթանալով նախնիին հայկական վայրերի հետ եւ հասկանալով, թե ինչու յուրաքանչյուր հայ, ում հանդիպում, էի նշում էր տեղանուն, որի միայն թուրքական անունը գիտէի, տխրեցի՝ բայց առավել եւս ջղայնացա, տեղեկության պակասից եւ Թուրքիայում մեծանալով արգելք առաջացնող լռությունից:

Բայց նաեւ իմ թուրք ընկերներից ու գործընկերներից որոշ բաներ են սովորել այս քանի տարվա ընթացքում: Զանազան տեղերից թուրքեր անսովոր ճնշում են զգում երբ խոսում են հայերի հետ 1915-ի դեպքերի շուրջ: Քանզի ամեն հայ այդ շրջանին անվանում է Հայոց Ցեղասպանություն

Էս նույնն է սպասում լսել թուրքերից, այս երկու խումբերի միջև խուլերի խոսակցություն է ընթանում: Շատ թուրքեր՝ որոնք նոր-նոր են սկսում իրենց իսկ պատմության մասին սովորել, այնպես են զգում, թե կարծես մեկն իրենց անընդհատ փորձում է լուեցնել, բացի եթե որեւէ նախադասություն «ց»-ից սկսվող բառով սկսեն: Սա հեմարիտ է նաև այն թուրքերի համար, որոնք բացեիբաց դատապարտում են օսմանյան կառավարության 1915-ի սերտագործությունները և որոնք ընդունում են որ հազարավոր անմեղ հայեր՝ ներառյալ կանայք և երեխաներ, որոշ թուրքերի կողմից սպանվեցին: Բայց իրենք պարզապես չեն կարող «ց»-ական բառը արտաբերել: Նրանք նաև զգում են որ ավելի ուշադրություն պետք է դարձվի այն ժամանակում Օսմանյան կայսրության վրա հնչումների ծավալին՝ ընդ որում արեւմտյան երկրներից, որոնց գաղափարախոսություններն ընդգրկում էին մահմեդականների դեմ ատելության մոտեցումներ: Շատ թուրքեր այսօր ուզում են լսվել. չեն ուզում որ իրենց նախնիներին «բարբարոս»-ի պիտակը փակցվի՝ մարդիկ, որոնք մի օր զարթնեցին ու որոշեցին հայերին ջարդել:

Ինչքան էլ կարենա լինեն այս կետերը շատ թուրքերի համար, էական ու խուսափվող նյութը չեն ծածկում: Եթե հասկացումը գալիս է բառորդ դար անց՝ ինչպես ինձ հետ պատահեց, կամ էլ մի օր հետո՝ բախտով և խորհրդածելով, ևս հավատում եմ որ յուրաքանչյուր թուրք պետք է իմանա ու ընդունի մի պարզ հեմարտություն. միգուցե մի տեղ, մի ձեռ, միգուցե նրա նախնին անմեղ հայի կյանքը խլեց, միայն որովհետև այն հայ էր: Այդքանը: Երբ տեղեկության այդ միավորը հասկացվի, անկեղծորեն ընդունվի, մարսվի, և իր տեղը գտնի յուրաքանչյուր թուրքի սրտում ու մտքում, այն ժամանակ ու միայն այն ժամանակ կկարողանանք բոլորս էլ էջը դարձնել: Եւ այդ նոր գլխում խոսակցությունը ոչ թե «ցեղասպանություն» եզրույթի փաստարկումը կլինի, նպատակադրման սահմանումը, կամ որեւէ կողմի կրած սպանությունների քանակը, այլ այն պարզապես կլինի խոսակցություն այն հարցի շուրջ, որ ուզում ենք թողնել մեր երեխաների մտքում. ինչպե՞ս կարելի է վերաբերվել «այլ»-ին հետ:

Օրինակ Գյուլնյուզը սպանվեց որովհետև նա *թուրք* դիվանագետ էր, և նա ներկայացնում էր այն

մուրյալ լուսթյունը, որ ազդում էր աշխարհի միլիոնավոր հայերի վրա: Հրանդ Տինգը սպանվեց որովհետև նա *հայ* էր Թուրքիայից ով բարձրաձայն խոսում էր եւ առաջ էր ֆառում լուսթյան *հակառակը* նույն նյութի շուրջ: Որպես մարդ՝ ոչ թուրք, հայ, կամ ամերիկացի, ով ատում է կարծրատիպերի գաղափարը, արհամարհանքը, հարձակումը, թիրախումը, կամ սպանությունն ըստ ազգային պատկանելության, եւ լացեցի նույն տեսակի արցունքներ այն երկու սպանություններից հետո: Բայց ահա եւ ինչպես են տարբերակվում այդ երկու դատապարտելի գործարքներն իմ հոգում ու սրտում. առաջին սպանությունն ինձ առաջնորդեց դեպի լուսթյան եւ տգիտության տարիներ, բայց երկրորդը՝ դեպի գիտելիք ու ճշմարտության հետապնդում: Եւ, ինչպես հեռեց Մարթին Լութեր Քինգ կրտսերը, եւ իսկապես հավատում եմ որ ճշմարտությունը մեզ ազատ կարձակի: Ավելին, որոշներ նմանեցնում են Տինգին Քինգին հետ՝ նկատելով իր ներշնչող նվիրվածությունը Թուրքիայի *բռնոր* փոքրամասնությունների իրավունքների բարելավման եւ իր հույսն այդ երկրում ֆաղափաստական իրավունքների նոր դարաշրջանի հիմնման նկատմամբ: Միայն ժամանկը կվկայի եթե Տինգին թողած ժառանգը իսկապես կկարողանա փոխել այն երկիրը ուր նա ծնվեց ու մահացաւ: Ահա նա ինչ գրեց հայերի ու թուրքերի միջեւ ավելի շատ երկխոսության հարկի մասին.

Մենք շատ երկար ժամանակ ենք ապրել այս հողում եւ ուստի ընդհանուր հիշողություն ենք կրում: Բայց եւ այնպես մենք փոխակերպել ենք այդ ընդհանուր հիշողությունը միատարր հիշողությունների մի շարքի: Մենք մեր իսկ երգչախումբերին ենք ֆարոգում: Արդյոք ժամանակը չէ՞ որ այս միախոսությունները վերածենք երկխոսությունների, որպեսզի կարողանանք մեր ընդհանուր հիշողության վերակառուցման վրա աշխատել: <sup>1</sup>

Արդյոք ի՞նչ ասած կլինեն Օրհան Գյունդյուզը Հրանդ Տինգին երբ երկուսը ողջ էին: Ավաղ, երբեք չենք իմանա, որովհետև մեզ չէր թուլադրվում մեր պատմության խորքերը փորվիրել կամ ձայնից զրկվածներին ձայն տալ այն տարիներին երբ Գյունդյուզը ողջ էր:

Ուրեմն այս բուրբը ինձ ո՞րտեղ է թողնում հայ-թուրքական հարաբերությունների չարճարյալ տարածքում: Հույսեր փայլալայն՞ում եմ երբ խոսում եմ նոր սերնդի հայերի ու թուրքերի հետ: Այո: Զզվո՞ւմ եմ ու գարշվո՞ւմ եմ երբ Պուլիսի փողոցներում հստակորեն ազգայնամուլ եւ հակահայկական

---

<sup>1</sup> «Ակօս»-ում Հրանդ Տինգի 2000 թ. նոյեմբերի 10-ի հոդվածից (վերաբարգմանություն անգլերենից):

ֆարագչություն են տեսնում: Առանց կասկածի: Պատրա՞ստ են հույսս թողնելու: Իհարկե ո՛չ: Ես հավատում եմ որ, եթե ոչ իմ երեխաների սերունդը, ապա իրենց թոռների սերունդը վերջապես ձեռք կգանի այս իրավիճակից դուրս գալու՝ մի ձեռ, որը կպահանջի ավելի բաց ու թափանցիկ հարաբերություններ հայերի ու թուրքերի համայնքների մեջ՝ ու միջեւ:

Եւ, վերջապես, որպէս թուրքական ծագումով Ամերիկայի ֆաղափացի, ես այժմ *ցեղասպանություն* բառն եմ օգտագործում երբ խոսում եմ 1915-ի ջարդերի մասին, թե այլապես երկակի նահանջ կլինի դեպի տգիտություն՝ ե՛ւ մտային առումով, ե՛ւ անձնական: Շատ եմ մտածում այդ երկու ֆաղափական սպանությունների մասին՝ Գյունդուզինը եւ Տինֆինը. իմ վերակրթության ճանապարհի ունց որ ծայրի կետերը լինեն: Եւ գիտեմ որ պարզապէս չեմ կարող շարունակաբար ժխտել Օսմանյան կայսրության հայերին վրա բերված բարբարոսության ու տանջանքի իսկական խորությունը եւ այն թեճամանքն ու ատելությունը որ 1915-ը սնեց գրեթե մէկ դար: Ավելի անձնական մակարդակի վրա, այդպիսի ժխտում իմ բոլոր նոր ընկերների ու ծանոթների հանդէպ արհամարհանք կլինէր... ոչ թե միային որովհետեւ նրանք պատահաբար հայեր են, այլ որովհետեւ նախ եւ առաջ ինձ համար նշանակություն կրող մարդ արարածներ են:

Գրնջա Սէօննէզ-Փուլ  
ապրիլ, 2012. Բոստոն